

որպէս զի մեղմութեամբ եւ խնայելով մը ըսած ըլլանք, ըստ սովորութեան հինն ամիրայութեան՝ ակամայ յոռմէտներ ու յոռեգործներ եղան աւելի՛ իրենց տգիտութեան, բաղդադիտութեան, անուսումնասիրութեան քան չարութեան բերումով։ Ոչ միայն չգիտէին օգտուիլ եւ օգտեցունել առեւտրական իրենց բացառիկ յաջողութիւններէն, ու զարգացունել ուսումնասիրութեամբ իրենց արուեստին տարրերն ու սեռ—տեսակները՝ գործին նպատակայարմար գիտակցութեամբ, այլ նաեւ շատ զգոյշ և ժլատ ալ էին իրենց ստորադրեալներուն յառաջդիմութեան վերաբերումով։ Աչալճը և այլամի՛րժ պահապաններ իրենց եղած շնորհներուն և բարիքներուն, իրենց աշխատաւորներուն երիտասարդական անգին կորովն սպառելէ ետք՝ պատրուակներով և հնարագէտ հեթեթանքով կը քարնդոտնէին և կը հեռացունէին անոնք իրենց գործերէն, փոխարէն վիճակելով անոնց կողմէ դառնասրտութեան մը, որ անէծքի մը հաւասար ոյժով կը ներգործէր իրենց գործին ու բաղդին դէմ...՝ արդարութիւնն ամէն բանի մէջ նոյն և անմահ ըլլալով։

Իրենց ասիական համբերութիւնն և կեղծեալ սքողեալ խորագիտութիւնն՝ հակակշռուած էր յաճախ և դժբաղդաբար ստորակարգեալ գործակիցին աշխատաւորին աչք բանալ չսալու անազնիւ հնարքներով, որով փոխան անկեղծ, ճարտար, համեստ ու գործանուէր գործակատարներու՝ իրենց քով կը խմբուէր ու կը մնար ապիկար շողոքորթնե՛րու, սը՛տկողներու, ճկճկո՛ւն Շաւլաքաններու ջուլիւր մը՝ փայփայող կրից և ինքնիրենց կարեւոր չա՛տ կարեւոր շռայլութեանց։ Մինչեւ սահման մը միայն դրամի տէր ընել իրենց սպասարկողները, խոստանալ և չըստորագրել ու չկատարել իրենց մեծ մեծ խոստումներուն գէթ փոքր մասը, պունիկեան հաւատքով և լե-